ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-58-Ո-128
2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 24-Ի ԹԻՎ ԲԴԽ-36-Ո-83 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով թիվ ՎԴ/4340/05/19 վարչական գործով Վարչական դատարանի 17.06.2019թ. «Հայցի ապահովման միջոց ձեռնարկելու մասին» և 02.08.2019թ «Հայցի ապահովման միջոցը վերացնելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին» որոշումները և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Բարձրագույն դատական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Բարձրագույն դատական խորհրդի 2019 թվականի մայիսի 24-ի «Փակ գաղտնի քվեարկությունների արդյունքում դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակը կազմելու և հաստատելու մասին» թիվ ԲԴԽ-36-Ո-83 որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումը.

1) Որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի՝ դատավորների թեկնածուների հավակնորդների քրեական մասնագիտացման բաժնի ցուցակը լրացնել 5-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

5.	ԴԱՆԻԵԼՅԱՆ Անի Կարենի	1991թ. ք.Երևան	«Դիջիթեյն» ՍՊԸ	Իրավաբան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ռ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

2019թ. օգոստոսի 21
ք. Երևան